

**ՅՈՒՐԵԼԵԱՆ**

**ԵՐԿԱԹԷ ՆԿԱՐԱԳՐՈՎ ԽԻՋԱԽ ԵՒ ԱՆՎԵՏՆԵՐ ԳՐՈՂԸ՝  
ԳՐԻԳՈՐ ԶՕՏՐԱՊ  
(Ծննդեան 160-ամեակի առթիւ)**

Գրիգոր Զօհրապի գործունէութիւնը տեղի է ունեցել հայ ժողովրդի համար բախտորոշ եւ ողբերգական ժամանակաշրջանում՝ 1877-1915 թթ.։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ սկիզբ դրուեց հայ ժողովրդի մեծագոյն հատուածի՝ արեւմտահայութեան ոչընչացման հրէշաւոր ծրագրին եւ գործադրուեց պատմութեանը մինչ այդ անծանօթ դատանութեամբ, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքի առջեւ եւ նրա մի մասի գործուն մասնակցութեամբ։ Այս երկու տարեթուերի միջեւ ընկած ժամանակաշրջանը բնորոշում է Զօհրապի, 1980-ական թուականների ռէալիստների՝ առհասարակ, եւ ամբողջ արեւմրտահայ ժողովրդի մտաւորականութեան լաւագոյն մասի գործունէութեան իւրայատկութիւնը<sup>1</sup>։

1900 թ.-ի Յունիսի 22-ին անյայտ անձնաւորութեանն ուղղուած նամակում Զօհրապը գրել է. «1861 Յունիս կամ Յուլիսին ծնած եմ Պէշիկթաշ»<sup>2</sup>։ Տարրական եւ միջնակարգ կրթութիւնը ստացել է տեղի հայկական դպրոցներում, որոնցից Թարգմանչաց վարժարանն է գլխաւորապէս նպաստել նրա անհատականութեան, նրա նկարագրի ձեւաւորմանը եւ առաջին գրական նախափորձերին։ «Գրիգորիկը,- վերջիշում է դասընկերներից մէկը՝ Տիգրան Արփիարեանը,- աշխարհաբարի հակումներ ունէր եւ կը գրէր մանրիկ ոտանաւորներ, յաջող շարագրութիւններ»<sup>3</sup>։ Ընկերները նրան «պատրիկ» էին կոչում. գնդիկ, մանրակազմ, վիճասէր եւ եռանդուն բնաւորութիւն էր. տարբերում էր աշակերտների մէջ։ Ուսուցիչները՝ բանաստեղծ եւ մանկավարժ Թովմաս Թէրզեանը եւ յայտնի վիպասան Մերենցը սիրել են նրան ու վիճել հետը, բաւարարել «պատրիկի» հարցասիրութիւնը։

Միջնակարգ կրթութիւնն աւարտելուց յետոյ, 21 տարեկան հասակում աւարտել է այդ ժամանակ Թուրքիայում գործող Ֆրանսիական երկու ուսումնական բարձրագոյն հաստատութիւն՝ ճարտարապետի եւ իրաւաբանի մասնագիտութեամբ։

<sup>1</sup> Հիսեան Մ., Գրիգոր Զօհրապ. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, 1957, էջ 11։  
<sup>2</sup> Զօհրապի ծննդեան ամսաթիւ է համարուել 1861 թ. Յունիսի 14/26-ը։ Արշակ Ալպոյանեանը՝ Զօհրապի անդրանիկ կենսագիրը, փաստում է. «Գրիգոր Զօհրապը ծնած է 1861 Յունիս 14-26-ին, Սուլթան Ազիզի գահակալութեան օրը... Լուսաւորչի օրը ծնած ըլլալուն համար Գրիգոր կը կոչուի» (Ալպոյանեան Ա., Անհետացող դէմքեր, Գրիգոր Զօհրապ (Իր կեանքը եւ իր գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 7)։ Իսկ Ա. Շարուրեանը հակափաստում է, որ Արղու Ազիզ խանը գահակալել է 1861-ի Յունիսի 13-ին (ոչ թէ 14-ին), բայց եթէ Զօհրապը իր prof այդ օրը ծնուած լինէր, ապա 1891-ին Ազգային ժողովը չէր բեկանի նրա երեսփոխանական ընտրութիւնը՝ պատճառաբանելով, թէ ընտրութիւնների օրը, Յունիսի 16-ին, չի ունեցել Սահմանադրութեամբ պահանջուող տարիքը եւ չի բոլորել իր 30-ը (Տէս Շարուրեան Ա. Մ., Գրիգոր Զօհրապի կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն, Ս. էջմիածին, 1996, էջ 51, 52-53 (1891-ի Յունիսի 28, Յուլիսի 12, 25 եւ 26 գրառումները)։ Իսկ ըստ 1861-ի օրացոյցների, «Լուսաւորչի օրը» եղել է Յունիսի 24 (Յուլիս 6) -ին։ Զօհրապի վկայութիւնից կարելի է ենթադրել, որ նրա ծնունդը ժամանակին չի գրանցուել եկեղեցական ծննդեան եւ մկրտութեան տոմարում։ Այս պնդման օգտին է խօսում նաեւ այն փաստը, որ 1888-ին Պէշիկթաշի թաղական խորհուրդը ի պատասխան Պատրիարքի հարցման, յայտնել է մկրտութեան օրուայ մասին միայն (1861 Յուլիս 11) (Տէս Շարուրեան Ա. Մ., Գրիգոր Զօհրապի կեանքի եւ գործունէութեան տարեգրութիւն, Ս. էջմիածին, 1996, էջ 43, 51, 53, 54-55 (1888-ի Դեկտեմբերի 4, 1891-ի Յունիսի 12, Հոկտեմբերի 17 եւ Նոյեմբերի 19 գրառումները)։  
<sup>3</sup> Ալպոյանեան Ա., Անհետացող դէմքեր, Գրիգոր Զօհրապ (Իր կեանքը եւ իր գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 19։

1883 թուականից զբաղուել է փաստաբանական գործունեություններով և նույն տարում հրատարակել է իր իրաւագիտական առաջին աշխատությունը<sup>4</sup>, որը կարճ ժամանակում մեծ հռչակ է բերել նրան: Շնորհիւ իր օրէնսգիտական հմտութեան և հոգեւորական կարողութեան, խիզախ և պատկառանք ազդող նկարագրի, դիմացինի տրամաբանութեան և հոգեբանութեան վրայ ներգործելու ունակութեան, Զօհրապը կարողանում էր յաճախ «անկարելին կարելի դարձնել» և շահել նույնիսկ անյուսալի դատեր: Ասում են, որ Զօհրապը տանու չի տուել իր պաշտպանած և ոչ մի դատ<sup>5</sup>:

Քչերին է յայտնի այն փաստը, որ Զօհրապը եղել է Ստամբուլի ռուսական դեսպանատան թարգմանիչ, իրաւագէտ-խորհրդականը և օգտուելով այդ իրաւունքից ռուս օտարահայատականների դատեր է վարել և ունցել է Եւրոպա ազատօրէն երթեւեկելու իրաւունք<sup>6</sup>:

1883 թ.-ից Զօհրապի նախաձեռնություններով սկսում է հրատարակուել «Երկրագունդ» հանդէսը, ուր նա կատարում է իր գրական նախափորձերը՝ երեք ոտանաւոր իր առաջին և վերջին տուրքը ժամանակի գրական ճաշակին, քննադատական երկու յօդուած Սրբուհի Տիւսաբի «Մայտա» վէպի մասին և մի երգիծական ակնարկ՝ «Զինական նամականի» խորագրով, որը արդէն վկայում էր հասունացող հեղինակի՝ իրականութիւնը սեփական պրիսմակով դիտելու, ինքնուրոյն մտածելու ուժը:

Զօհրապի առաջին ծաւալուն երկը՝ «Անհետացած սերունդ մը» վէպն է, որը, տարիներ յետոյ, նա համարել է «ողորմելի նախափորձ», գրական տարբեր ոճերի «չիմար խառնուրդ»<sup>7</sup>: Վէպից մի փոքրիկ հատուած լոյս է տեսել «Երկրագունդ»-ի մէջ 1885-ի Մայիսի համարում, ապա դադարեցուել է տպագրութիւնը, որովհետեւ հանդէսի խմբագրութիւնը, ինչպէս Արփիար Արփիարեանն է ասում. «Քիչ մը բաց տեսած էր զայն»: 1886 թ. Յունիսի 21-ից այդ վէպը տպագրուում է «Մասիս» շաբաթաթերթի մէջ, որի խմբագիրն էր ժամանակի գրական կեանքի ղեկավար՝ Արփիար Արփիարեանը<sup>8</sup>:

«Անհետացած սերունդ մը» վէպը, շնայած իր զգալի թերութիւններին, դարձաւ նրա ստեղծագործական առաջին խիզախումը: Վէպի հրատարակութեան առիթով Լ. Բաշալեանն իր գրած գրախօսականում ասում է. «Գրիգոր էֆ. Զօհրապ թէեւ առաջին անգամ կ'իջնէ հայ գրական ասպարէզին մէջ, այլ նոյնհետայն կը գրաւէ անդ կարեւոր տեղ մը: Ի վաղուց հետէ հրատարակուած չէր գիրք մը այսքան «նոր» ու այսքան «գրական» ... «Ըսենք միանգամ ընդմիջտ, Գրիգոր էֆենտի Զօհրապի վէպն առաջնակարգ երկ մ'է, և վստահ ենք թէ հեղինակին պիտի տայ գրական մեծ համբաւ մը, ամէն մասամբ արդարացի: Երանի՛ թէ երիտասարդ փաստաբանն, իւր ծանրածանր զբաղմանց մէջտեղ, առիթ ունենայ հետզհետէ ճոխացնելու արդի հայ վիպասանութիւնն իւր երկերով»<sup>9</sup>:

«Անհետացած սերունդ մը» վէպի այսպիսի ընդունելութեան պատճառը միայն նրա գեղարուեստական արժէքը չէր: Վէպը հիմնականում ընդունելի էր նաեւ իր առաջադրած հարցերով և գաղափարներով: Երիտասարդ հեղինակն իր վէպով, որը ունակութեան առաջին վէպն էր արեւմտահայ գրականութեան մէջ, ցոյց տուեց՝ մտածողի, իրականութիւնը գեղարուեստօրէն դիտողի, հասարակական ուժերի հակընդդէմ պայ-

<sup>4</sup> Զօհրապը գրել է ընդամենը երեք իրաւագիտական աշխատութիւն, որոնցից մէկը՝ ֆրանսերէն, երկուսը թուրքերէն:

<sup>5</sup> Հիստեան Մ., Գրիգոր Զօհրապ. կեանքը և ստեղծագործութիւնը, Երեւան, 1957, էջ 27:

<sup>6</sup> Զօհրապ Գ., Երկեր, Հայ դասականների գրադարան, Երեւան, 1989, էջ XV:

<sup>7</sup> Տե՛ս «Մասիս», 1902, թիւ 5, էջ 67 և «Գրական ասուլիսներ», էջ 4:

<sup>8</sup> Տե՛ս «Գրական ասուլիսներ, Բ., Գ. Զօհրապի նորավէպերը», Կ. Պոլիս, 1913, էջ 28:

<sup>9</sup> «Մասիս», 1887, թիւ 3877, էջ 182-183:

քարը ըմբռնողի անուրանալի յատկութիւններ: Վէպում հեղինակն ըմբոստանում է՝ ազգային գործերում հակաժողովրդական տարրերի ոտնձգութիւնների դէմ, սոցիալական շարիքների դէմ, առաջադրում է անհատի ազատութեան, ներդաշնակ ընտանիքի, գրականութեան զարգացման պահանջներ, բողոքում է հայ ժողովրդի ազգային գիտակցութիւնից զուրկ տարրերի ձուլմանը նպաստող գործօնների, յատկապէս ճիզուրկ-տական դպրոցի դէմ<sup>10</sup>:

Սակայն, մեծ կտաւը չէր համապատասխանում Զօհրապի ստեղծագործական հոգեբանութեանը, նրա ուժը իրականութեան ծաւալուն պատկերման մէջ չէր, այդ պատճառով էլ նրա վիպական փորձերը, փորձեր էլ մնացին, թէեւ «Անհետացած սերունդ մը» վէպը իր ժամանակին ունեցաւ կարեւոր նշանակութիւն: Զօհրապի ուժը, իրականութեան գեղարուեստական ընկալման եւ պատկերման իւրայատկութիւնը խըտացման մէջ է, հակիրճութեան մէջ: Նրա ստեղծագործութեան պսակը նորավէպերն են, արուեստի այդ բիւրեղացումները, որոնք իրականութեան ստոյգ վաւերագրեր են եւ զգայական հարուստ ներաշխարհի ու փիլիսոփայող մտքի արգասիքներ, ստեղծագործող եւ ոչ թէ նկարագրող արուեստագէտի երկեր, այդ պատճառով էլ նրանց մէջ, իբրեւ ճշմարիտ արուեստի արտայայտութիւնների՝ կայ լոյս եւ ժպիտ, կայ գեղեցկութեան զգացում եւ յոյզի գունեղութիւն, կայ հոգու կրակ եւ վերանալու դրդում:

Գրիգոր Զօհրապը այն գրողներից չէ, որոնք ուշ են ճանաչուում եւ գնահատուում, ընդհակառակն, գրական փառքը, ասպարէզ գալու գրեթէ առաջին օրից, կրնկակոխ հետեւել է նրան: 1888 թ.-ին, երբ Զօհրապը գրականութեան մէջ տակաւին առաջին քայլերն էր անում, Հր. Ասատուրը, նշելով նրա «երկաթէ նկարագիրը», «խիզախ եւ անվեհեր գրող» լինելը, աւելացնում է, որ Զօհրապը «փառաւոր յայտնութիւն մեղաւ մեր գրականութեան համար»<sup>11</sup>: Նա յայտնութիւն էր հայ գրականութեան համար նախ եւ առաջ իբրեւ մեծ արուեստագէտ: Զօհրապի երկերը հիացնում էին ժամանակակիցներին ոչ միայն բովանդակութեամբ, այլեւ ձևի գեղեցկութեամբ, իբրեւ արուեստի իսկական արտայայտութիւններ, որոնք արեւմտահայ արձակը բարձրացնում էին նոր աստիճանի: Ահա թէ ինչո՞ւ արեւմտահայ բոլոր յայտնի գրողները արժեւորեցին Զօհրապի երկերը: Իսկ յետագայում, 1898-ից յետոյ, Զօհրապը ձեռք բերեց այնպիսի ժողովրդականութիւն, որպիսին քիչ գրողների է վիճակուում: Որպէս «նոր սերնդեան ամենէն յանդուգն ու հզօր յառաջապահը» (Ե. Տէմիրճիպաշեան), Զօհրապը 1898-ից յետոյ դառնում է կենտրոնական դէմք, որի շուրջն են համախմբուում ժամանակի գրական առաջաւոր դէմքերը: Նրա երկերը թափանցում են ժողովրդի ամենալայն խաւերի մէջ, դառնում կենդանի հետաքրքրութեան առարկայ: «Ամէն մարդ կը կարդայ զինքը հաճոյքով, անհամբերութեամբ, սքանչանքով, - ասում է բանաստեղծուհի եւ մանկավարժ Սիպիլը,- ծերերն ալ, երիտասարդներն ալ, աղջիկներն ալ, դպրոցական տղաքն ալ՝ հակառակ մեր արգելքին, եւ գրագէտն ալ, ռամիկն ալ, ու ամէնքը կը հասկնան, ամէնքը կը փնտռեն զինքը եւ իր կարօտը կը զգան»<sup>12</sup>:

Զօհրապի ստեղծագործութեան առաջին շրջանի նորավէպերը գրուած են 1887-1890 թթ.-ին, երբ նա, իբրեւ 80-ականների շարժման մասնակիցներից մէկը, անմիջականօրէն կենսագործում էր նրա գաղափարական խնդիրները: Այդ շրջանի նրա նորավէպերից մէկը Ա. Արփիարեանը, շատ դիպուկ բնորոշումով, անուանել է «հրացանաձգութիւն»: Այդպիսի հրացանաձգութիւններ էին, տարբեր նշանակետերով, Զօհրապի այդ շրջանի գրեթէ բոլոր նորավէպերը: Ութսունականների գրական շարժման

<sup>10</sup> Զօհրապ Գ., Երկերի ժողովածու երկու հատորով, հ. առաջին, Երեւան, 1962, էջ XI:

<sup>11</sup> «Արեւիկ», 31-12-1888:

<sup>12</sup> «Գրական ասուլիսներ, Բ., Գ. Զօհրապի նորավէպերը», Կ. Պոլիս, 1913, էջ 22:

առաջին շրջանում, մանաւանդ, գրականութիւնը եւ հրապարակախօսութիւնը շատ սերտ միասնութեան մէջ էին, յօդուածի նիւթը դառնում էր գրական երկի թեմա եւ ընդհակառակն, ու Զօհրապի այդ շրջանի նորավէպերի զգալի մասը յագեցած է հրապարակախօսական սրութեամբ: Այդ շրջանի ամէն մի նորավէպի մէջ արծարծուած են ժամանակի համար շատ կենսական եւ յուզող հարցեր<sup>13</sup>:

Ընդհանուր առմամբ Զօհրապը գրել է շուրջ քառասուն նորավէպ, բայց դրանք գրել է քսանհինգ տարուայ ընթացքում, եւ այս հանգամանքը, անտարակոյս որոշակի նշանակութիւն է ունեցել նրա նորավէպերի ոչ միայն ձեւի, այլեւ բովանդակութեան հարցում. ամէն մի նորավէպի մէջ նա հնարաւորութիւն է ունեցել դնելու մտքի եւ հոգու երկարատեւ աշխատանքի կուտակումներ, երկարատեւ դիտողութեան արդիւնքներ:

Զօհրապի՝ առաջին շրջանի ստեղծագործութիւններում տեսնում ենք վիպական գուգահեռներով զարգացող սիւժէ ունեցող նորավէպ («Կանանց բժիշկը»), դրամատիկ ուժեղ տարրեր պարունակող նորավէպեր («Այրին», «Արմենիսա») եւ, արդէն լիովին ձեւաւորուած առանձնայատկութիւններով, նորավէպ-դիմանկարներ, ինչպէս «Խարիսխը» եւ «Մեղա՛ տէր»-ը, որոնք աչքի են ընկնում կառուցուածքի դասական պարզութեամբ, զարմանալի յստակութեամբ, մանաւանդ «Խարիսխը»<sup>14</sup>:

Երկրորդ շրջանը շատ կարճատեւ եղաւ, բայց բեղմնաւոր թէ՛ գեղարուեստական երկերով, թէ՛ հրապարակախօսութեամբ: Չնայած անհեթեթ չափերի հասնող գրաքննութեանը, Զօհրապն այս շրջանում ստեղծել է իր «անմրցելի հրաշակերտներ»-ից մի քանիսը՝ «Այինկա», «Թեֆարիկ»<sup>15</sup>, «Ճիտին պարտքը» նորավէպերը, որոնց կողքին գրել է նաեւ այնպիսի նորավէպեր, որոնց մէջ չկայ պայքար, չկայ ժամանակի յուզող հարցերի արձագանք («Ֆուրթունա», «Ճոկօ», «Ճալիլա»):

1883-1893 տասնամեակում գրուած նորավէպերից միայն մի քանիսն են այսպէս ուղղակիօրէն վերաբերում մարդկային ապրուստի, հոգս ու կարիքի հոգեբանական տարածութեանը: Մնացածը անմիջականօրէն առընչում է կնոջ եւ սիրոյ՝ մարդկային յարաբերութիւնների միջուկի, հիմնայենքի վերլուծութիւններին, ճանաչմանը եւ խոր մեկնաբանութիւններին: Պոլսահայ գրական աշխարհը նրա ամէն մի նորավէպի հետ տակնուվրայ էր լինում: Կեանքում ունէր իր հերոսների նախատիպերը, բայց նորավէպը այնպէս էր կառուցում, որ շատ քչերը կարող էին կուսել ծանօթների կեանքից առնուած դրուագները: Ինքն էլ շատ զգոյշ եւ նրբանկատ էր այդ հարցում:

1893 թ.-ից յետոյ սկսում են արեւմտահայութեան համար զարհուրելի տարիներ, ժողովրդի գլխին կախում է համիդեան մերկ ու արիւնոտ յաթաղանը, դադարում է ութսունականների շարժումը: Նոյն թուականի Օգոստոսին լոյս է տեսնում Զօհրապի հրատարակած «Մասիս» գրական շաբաթաթերթի վերջին համարը, որից յետոյ նա ոչ մի տող չտպագրեց մինչեւ 1898 թ., երբ Սիպիլի եւ Հ. Ասատուրի հետ ստանձնեց «Մասիս» օրաթերթի խմբագրութիւնը<sup>16</sup>:

Մասսայական զանգուածային կոտորածները, որ սկիզբ առան 1894 թ.-ից շարունակուեցին մինչեւ 1896 թուականը: Այդ օրերը սուգի օրեր էին հայ ժողովուրդի համար: Գրեթէ բոլոր յայտնի գրողները փախել էին մահահոտ երկրից եւ ապաստան գտել ար-

<sup>13</sup> Տե՛ս Հիւսեան Մ., Գրիգոր Զօհրապ. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, 1957, էջ 126-127:

<sup>14</sup> Հիւսեան Մ., Գրիգոր Զօհրապ. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, 1957, էջ 152:

<sup>15</sup> «Թեֆարիկ»-ը եւ նոյն շրջանում գրուած «Ճեյրան»-ը Ղ. Աղայեանը, Յովհ. Թումանեանն ու Վ. Փափագեանը գեաեղել են իրենց կազմած «Թիւրքահայ գրողներ» ժողովածուի մէջ, իբրեւ Զօհրապի նորավէպերի լաւագոյն օրինակներ:

<sup>16</sup> Տե՛ս Զօհրապ Գ., Երկերի ժողովածու երկու հատորով, հ. առաջին, Երեւան, 1962, էջ XVI:

տասահմանում: Զօհրապը միակն էր երկրում մնացած ականաւոր գործիչներից եւ նրա վրայ մեծ պարտականութիւն էր ընկնում՝ գլխաւորել գրական կեանքը, մամուլը, ոգեւորել, յոյս եւ տոկոնութիւն ներշնչել քանդուած բոյնը վերաշինողներին: Եւ «խիզախ ու անվեհեր» գրողն իր ստեղծագործութիւններով խրախուսում էր ժողովրդին, պահանջում էր շրնկճուել, վհատութեան գիրկը շրնկնել, քանզի վհատութիւնը պայքարից հրաժարուողների բաժինն է, իսկ հայը երբեք չի հրաժարուել պայքարից:

1898 թ.-ից, հնգամեայ ընդմիջումից յետոյ, սկսում է Զօհրապի ստեղծագործութեան երրորդ եւ ամենանշանակալից շրջանը, որ տեւում է տասնվեց տարի (1898-1914 թթ.): Իր լաւագոյն նորավէպերի եւ ակնարկների մեծ մասը, արձակ եւ շափածոյ բանաստեղծութիւնները, գեղարուեստական հրապարակախօսութեան լաւագոյն նմոյշների մեծ մասը Զօհրապը գրել է հէնց այս շրջանում<sup>17</sup>:

Որքան էլ Զօհրապը յորդորում էր շրնկճուել, չուսահատուել, ինքն էլ, այդ լաւատես ու կենսուրախ մարդը, չէր կարողանում խուսափել յուսալքման իր տուրքից: Մարդկայնօրէն միանգամայն հասկանալի է դա, քանզի սուգը շատ էր մեծ եւ հեռանկարը մշուշոտ: Այդ տրամագրութիւնների արդիւնք են 1898 թ.-ին «Մասիս»-ի փետրուարեան համարներից մէկում Զօհրապի հրատարակած «Խնդուքը» եւ «Կապիկը» նորավէպերը, որոնց մէջ ցոյց է տրուած երջանկութեան անհնարինութիւնը եւ աշխարհի անտարբերութիւնը տառապանքի եւ տառապողի հանդէպ:

Նոյն տրամագրութիւնների արգասիք են «Թիթեռնիկներ» եւ «էտվայս» արձակ բանաստեղծութիւնները, որոնց մէջ հեղինակը պատկերել է 1896-ի կոտորածներից յետոյ ստեղծուած ծանր վիճակը, հայ ժողովրդի մեծ վիշտը այդ առթիւ եւ ողբերգութիւնը այն սերունդի, որի մէջ էր նաեւ ինքը՝ Զօհրապը: Այս շրջանում է գրել նաեւ «Փոստալ», «Լուսահոգին», «Ժամին բակը», «Մագդաղիմէ», «Վերադարձը», «Յակոբիկ» նորավէպերը, որոնք ունեն նաեւ մերկացնող ենթատեքստ՝ ուղղուած համիդեան իրականութեան դէմ<sup>18</sup>:

Այս շրջանում գրած Զօհրապի ամենախոր երկը «Փոստալ»-ն է, որի լոյս ընծայումից յետոյ Նելիա Տէմիրճիպաշեանը ասում է. «Գրիգոր Զօհրապի Փոստալը... երէկ կարգացի եւ կարգալէս յետոյ շուրջս փնտռեցի մեր գերագանց վիպողն, որպէսզի տաք ձեռքը սեղմեմ ուրախակից»<sup>19</sup>: Այսպիսի հիացմունքով եւ սիրով Զօհրապի ու նրա երկերի մասին խօսում են ժամանակակից գրեթէ բոլոր գրողները՝ Արփ. Արփիարեան, Եր. Օտեան, Շիրվանզադէ, Դ. Վարուժան եւ շատ ուրիշներ:

Բացի վէպից եւ նորավէպից, Զօհրապը գրել է նաեւ գրական դիմանկարներ, ակնարկներ, արձակ եւ շափածոյ բանաստեղծութիւններ, ճամփորդական նկարագրութիւններ, յուշագրական էջեր, ֆելիետոններ եւ այլն, որոնք բոլորն էլ կարեւոր են՝ հեղինակի ստեղծագործական դէմքը, գաղափարական ըմբռնումներն ու դիրքորոշումը, կատարած դերը ուսումնասիրելու եւ որոշելու համար, մանաւանդ որ, տարբեր ժանրի երկերը, զգալի մասով, կեանքի տարբեր բնագաւառների, տարբեր երեւոյթների են վերաբերում:

Զօհրապը, դժբախտաբար, հնարաւորութիւն չունեցաւ ամբողջովին գրականութեանը նուիրուելու, բայց գրականութիւնը նա սիրել է այնպիսի սիրով, ինչպէս կարող է սիրել ճշմարիտ արուեստագէտը, որի համար արուեստը ներքին մեծ ու անդիմադրելի պահանջ է, ստեղծագործելը՝ հոգեկան ուժերի ծախսման բարձր անհրաժեշտութիւն:

<sup>17</sup> Տէւ Հիսեան Մ., Գրիգոր Զօհրապ. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, 1957, էջ 199:

<sup>18</sup> Տէւ Զօհրապ Գ., Երկերի ժողովածու երկու հատորով, հ. առաջին, Երեւան, 1962, էջ XVI:

<sup>19</sup> «Մասիս», 1901, Թիւ 11, էջ 169:

Այդ մասին լաւ է ասել ինքը՝ հեղինակը «էջեր ուղեւորի մը օրագրէն»-ի մէջ. նկարագրելով, թէ ինչպէս «Գրականութեան Սատանան» հետապնդում է իրեն, եւ ինքը ամենեւին չի դիմադրում այդ «կալանաւորումին»։ Զօհրապին եւ նրա ստեղծագործական հոգեբանութեանը լաւ ծանօթ Ա. Զօպանեանը, խօսելով նրա գործունէութեան տարբեր բնագաւառների մասին, ակեղացնում է, որ «իր գործունէութեան ձեւերէն այն զոր ամենէն ակելի հրայրքով, հեշտանքով կը կատարէր, գրականութիւնն էր։ Կը պաշտէր գրականութիւնը»<sup>20</sup>։

1908 թ.-ին Զօհրապը մեկնում է Փարիզ՝ նպատակ ունենալով հաստատուել արտասահմանում։ Սակայն Թուրքիայում 1908 թ. Յուլիսի 10-ին տեղի ունեցած պետական յեղափոխութեան յաղթանակից յետոյ նա անվարան մեկնում է Պոլիս, հաւատալով, թէ «... Թուրքիան ճշմարիտ սահմանադրութեան մը բարիքը վայելելու անակնկալ բախտը ունեցած»<sup>21</sup>։ Իթիհաթականների<sup>22</sup> հաստատած «սահմանադրական» կարգերը մի պահ ոգեւորում են նաեւ Զօհրապին, եւ նա իրեն յատուկ եռանդով նետում է քաղաքական ասպարէզ եւ կարճ ժամանակում դառնում է կենտրոնական դէմք հայ հասարակական կեանքում։

Զօհրապի քաղաքական գործունէութեան առաջին քայլն է լինում համերաշխութիւն ստեղծել դարերով իրար թշնամացած հայ եւ թուրք ազգերի միջեւ։ Նրա նախաձեռնութեամբ կազմակերպւում է հրապարակային հսկայական ցոյց, ուր նա արտասանում է իր քաղաքական առաջին ճառը, որը թողնում է շտեմնուած տպաւորութիւն։ Յաջորդ օրը տեղական բոլոր լեզուներով թերթերը հրատարակում են ճառը նոյնութեամբ։ Զօհրապի հոշակը տարածւում է ամբողջ մայրաքաղաքում։

Զօհրապի վայելած մեծ ժողովրդականութեան առաջին արտայայտութիւնը լինում է այն, որ նրան Ազգային Ժողովի երեսփոխան են առաջադրում Պոլսի վեց ամենամեծ թաղերից։ Այդ ժողովրդականութեան արդիւնք էր նաեւ այն, որ հակառակ իթիհաթականների դիմադրութեան եւ մի շարք մեքենայութիւնների, Զօհրապը 1908-1915 թթ. բոլոր ընտրութիւններին ընտրւում է պառլամենտի անդամ<sup>23</sup>։

Իբրեւ պառլամենտի անդամ՝ իր «հզօր տաղանդով», պետական գործունէութեան իր բազմազան ձիրքերով ու առաջաւոր հայեացքներով, իր «մագիստրոսական», քաղաքականապէս յագեցած ճառերով, Զօհրապը մեծ հոշակ ձեռք բերեց ո՛չ միայն Թուրքիայում, այլեւ նրա սահմաններից դուրս։ «Մշակ» թերթը, Զօհրապի հասցէին շատ ներբողներ հիւսելուց յետոյ, ասում է, որ այսօր Զօհրապը մեր եւ օտար մամուլի հիացումի առարկան է, որ պատմութեան մէջ իբրեւ երեսփոխան անմահութեան էջ է բացել իր համար<sup>24</sup>։ Զգալի դեր է կատարել նաեւ Կիլիկիայի կոտորածների ժամանակ։ Նրա ջանքերի արդիւնքն էր, որ թուրք կառավարութիւնը, որ մեղադրում էր Կիլիկիայի հայերին ապստամբութեան մէջ, ստիպուած եղաւ մասամբ ընդունել ջարդարարների մեղաւորութիւնը։ «Եթէ Զօհրապ չըլլար, - ասում է Նր. Օտեանը, - թերեւս ջարդուողները յանցաւոր հոշակուէին»<sup>25</sup>։

Զօհրապին յուզող, մտահոգող հարցերից մէկն էլ Հայկական հարցն էր, որի շուրջ նա բանակցութիւններ է վարել տարբեր պետութիւնների դեսպանութիւնների հետ, իսկ 1913 թ.-ին՝ Մարսել Լէար ծածկանունով Փարիզում հրատարակել է նոյն հարցին

<sup>20</sup> Հիստան Մ., Գրիգոր Զօհրապ. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, 1957, էջ 12։

<sup>21</sup> Տէւ Զօհրապ Գ., Երկերի ժողովածու երկու հատորով, հ. առաջին, Երեւան, 1962, էջ XX։

<sup>22</sup> «Միութիւն եւ առաջադիմութիւն» (թուրք. «İttihat ve Terakki», «իթիհաթ վե տերաֆֆ»)։

<sup>23</sup> Տէւ Հիստան Մ., Գրիգոր Զօհրապ. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, 1957, էջ 44-45։

<sup>24</sup> Տէւ «Մշակ», 1909, թիւ 142։

<sup>25</sup> «Մանանա», Կ. Պոլիս, 1913, թիւ 1, էջ 15։

նուիրուած ֆրանսերէն մի աշխատութիւն՝ «Հայկական հարցը վաւերագրերի լոյսի տակ» խորագրով, որի մէջ օգտագործուած է փաստական հարուստ նիւթ արեւմտահայութեան վիճակի, մշակոյթի ու տնտեսական կեանքի վերաբերեալ եւ որը յատուկ շահեկանութիւն ունի մեր նոր շրջանի պատմագրութեան համար:

1915 թ. Ապրիլի 11-ի գիշերը, Թուրքիայի ներքին գործոց նախարար՝ ոճրապարտ Թալէաթը հայերի ցեղասպանութիւնն սկսելու հրաման է արձակում: Մի գիշերում ձերբակալուած եւ աքսորուած է Պոլսի հայ մտաւորականութեան մի ստուար խումբ, որի մէջ էին արեւմտահայ գրականութեան ամենաականաւոր դէմքերը:

Զօհրապը, զգայուն եւ հայրենասէր մարդ, տառապում էր իր ժողովրդին հասած այդ աղէտի համար, որ սկիզբն էր մեծ ողբերգութեան: Յուզումը եւ ջղագրգիռ վիճակը ծանրանում էր նաեւ նրանով, որ ամէն օր լսում էր իր ճամփան սպասող՝ ձերբակալուածների կանանց եւ երեխաների աղաչանքները: Նրանք խնդրում էին Զօհրապի միջամտութիւնը:

Վտանգ էր սպառնում նաեւ Զօհրապին: Շատերը առաջարկում են նրան անմիջապէս հեռանալ Պոլսից, սակայն նա չի համաձայնում. «Ո՞ր փախչիմ եւ ինչպէ՞ս, որո՞ւ թողում այս անգլուխ ու անտէր ժողովուրդը: Չէ՛, փախչիլ չեմ կրնար, պէտք է, պարտքս է մինչեւ վերջը պատնէշին վրայ կենալ»<sup>26</sup>: Զօհրապը ո՛չ միայն չի փախչում, այլեւ իր կեանքը վտանգելով բողոքում է կառավարութեան վարած քաղաքականութեան դէմ:

Մայիսի 19-ին գնում է ցեղասպանութեան հրամանն արձակողի՝ Թալէաթի մօտ եւ բուռն զայրոյթով բացատրութիւն է պահանջում նրանից.

«Օր մը, կ'ըսէ, ապահով եղէք որ հաշիւ պիտի պահանջուի ձեզմէ եւ դուք չպիտի կարենաք արդարացնել ձեր արարքները»<sup>27</sup>:

Թալէաթ Պէյ հեգնանքով կը հարցնէ.

- Ո՞վ պիտի պահանջէ այդ հաշիւը:

- Ե՛ս,- կը պատասխանէ Զօհրապ,- Խորհրդարանի մէջ իբր Հայ մեպուս [պատգամաւոր], ձենէ հաշիւ պիտի պահանջեմ:

Այդ վայրկեանին իսկ վճռուած էր իր մահը»<sup>28</sup>:

Մայիսի 20-ին Զօհրապին ձերբակալում են եւ անմիջապէս գնացք նստեցնում Տիգրանակերտ ուղարկելու համար, պատրուակ բռնելով, որ իբր թէ այնտեղի «Պատերազմական ատեանէն» կանչուած է հարցաքննութեան:

Աքսորի ճանապարհից Զօհրապի՝ կնոջը գրած նամակները շափազանց յուզիչ են, դրանցից մէկում նա գրում է.

«Մի՛ յուզուիր, քաջ եղիր, ես քաջ եմ, բայց հիւանդ. պիտի ջանամ ապրելու...»

Հսէ՛ ամենուն որ զրպարտութեան մը զոհն եմ. մարդկութեան պարտքն է, որ զիս ազատեն. ես ամենուն համար աշխատած եմ, թող ուրիշներն ալ ինծի համար աշխատին»:

Մէկ ուրիշ նամակում գրում է.

<sup>26</sup> «Էջեր ուղեորի մը օրագրէն», Իզմիր, 1922, էջ ԺԲ, (Սերոբ Դարթեանի յուշերից):

<sup>27</sup> Այդ հաշիւը Թալէաթից պահանջեցին. 1921 թ.-ին Բեռլինի փողոցներից մէկում Սողոմոն Թէկլեւեանը ատրուանակի կրակոցով վերջ տուեց «շուն բուրֆի» կեանքին:

<sup>28</sup> Ալպոյանճեան Ա., Անհետացող դէմքեր, Գրիգոր Զօհրապ (Իր կեանքը եւ իր գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 245, Տե՛ս նաեւ «Էջեր ուղեորի մը օրագրէն», Իզմիր, 1922, էջ ԺԱ:

«Աւելի գրելու ոյժ չունիմ, թէ որ ողջ չի մնամ, զաւակներուս վերջին պատուէրս եւ կտակս է, որ միշտ սիրով ըլլան իրարու հետ, զքեզ պաշտեն եւ սիրտդ չի ցաւցնեն ու... զիս ալ յիշեն: Ահա միակ հարստութիւնս. անոնց գրկին մէջ հոգիս տալ ի՞նչ ուրախութիւն. չեմ գիտեր թէ աստուած այս բաղձանքս պիտի կատարէ՞»<sup>29</sup>:

Բայց այդ բաղձանքը չկատարուեց: Զօհրապը դաժանօրէն սպանուեց աքսորի ճանապարհին, Եդեսիայի (Ուրֆա) մօտակայքում, 1915 թուականի հաւանաբար Յուլիսի 7-ին: Այս թուականն է դրուած այն կեղծ փաստաթղթերի տակ, որոնց նպատակն էր ցոյց տալ, թէ Զօհրապը մեռել է բնական մահով: Սակայն նրա սպանութեան ճշգրիտ մանրամասնութիւնները, բուն ոճրագործի՝ Չէրքէզ Ահմէտի խօսքերից առնելով, հաղորդում է թուրք պատմագիր Ահմէտ Բէֆիգը: Այդ վայրենին, հայ ժողովրդի արիւնարբու դահիճներից մէկը, սատիստական յատուկ բաւականութեամբ է պատմել իր ոճրագործութիւնը: Պատմաբանի հարցին, թէ ի՞նչ եղան Զօհրապը եւ միւսները, վայրենին պատասխանել է.

«- Ա՛, չիմացա՞ք, ամենքն ալ սատկեցուցի:

Միկառին ծուխերը դէպի օդը բարձրացուց, ձախ ձեռքովը պեխերը շտկելով՝ խօսքը շարունակեց:

- Հալէպէն ելած էին: Ճամբան հանդիպեցանք: Իսկոյն իրենց կառքերը պաշարեցի: Հասկցան թէ պիտի սատկին: ... Զօհրապը ձեռք անցուցի: Ոտքիս տակը առի, խոշոր քարով մը գլուխը ճզմեցի, ճզմեցի, ճզմեցի մինչեւ որ սատկեցաւ»<sup>30</sup>:

Հանճարի եւ վայրենու, քաղաքակրթութեան եւ բարբարոսութեան ընդհարումն էր այդ սպաննութիւնը, որ կատարուեց նախամարդու գործիքով՝ քարով:

Զօհրապի յիշատակը թանկ է մեզ համար ո՛չ միայն իբրեւ գրող՝ իր անմեռ երկերով, այլեւ իբրեւ մեծ հայրենասէրի ու մարդասէրի, իբրեւ մի մարդու, որը պատուով կատարեց իր որդիական պարտականութիւնները հայ ժողովրդի հանդէպ եւ նահատակի պսակը զլխին՝ գնաց միանալու մեր պատմութեան այն նուիրական անուններին, որոնք փառքի յաւերժական կոթողներ են մեր ժողովրդի առաջընթացի ճանապարհին:

ՆԵՐՍԵՆ ԱԲՂ. ԱԼՈՅԵԱՆ



<sup>29</sup> «Էջեր ուղտորի սը օրագրէն», Իզմիր, 1922, էջ ԺԵ-ԺԶ: Տե՛ս նաեւ Հիւսեան Մ., Գրիգոր Զօհրապ. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Երեւան, 1957, էջ 52:

<sup>30</sup> Ալպոյանճեան Ա., Անհետացող դէմքեր, Գրիգոր Զօհրապ (Իր կեանքը եւ իր գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 252: